ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 11, 1965 Общественные науки

Ս. Հ. Մովսիսյան
ՀՍՍՌ Մինիստրների սովետի նախագահի առաջին տեղակալ

45 ՏԱՐԻ ՄԵԾ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ՈՒՂԻՈՎ

Քառասունհինգ տարին պատմության համար ժամանակի շատ փոքր հատված է։ Սակայն հայ ժողովրդի կյանքում այդ տարիները դարձան նյութական և հոգևոր ուժերի, ստեղծագործական ունակությունների ժամանակաշրջան, կյանքի բոլոր բնագավառների արմատական ձևավորման ժամանակաշրջան։

Քառասունհինգ տարի առաջ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները թոթափեցին շահագործողների լուծը և անցան նոր հասարակարգի ստեղծմանը, սոցիալիզմի կառուցմանը։ Այժմ Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունը ինքնուրույն սոցիալիստական պետություն է, հզոր Սովետական Միության եղբայրական ժողովուրդների մեծ ընտանիքի իրավահավասար անդամ։ Աղքատության և ոչնչացման եզրին կանգնած երկրից Հայաստանը, կարճ ժամանակում, վերածվեց զարգացած արդյունաբերության և առաջավոր գյուղատնտեսության երկրի, բարձր կուլտուրայի, ծաղկող գիտության ու արվեստի երկրի։

Հայ ժողովրդի պատմությունը լի է իր էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման համար անձնազոհ աշխատանքի հերոսական էջերով։ Երկար դարերի ընթացքում, նա համառ պայքար է մղել օտարերկրյա զավթիչների դեմ, կռվել է ազատության և անկախության համար։ Իսկ երբ կախվել էր ողջ հայ ազգաբնակչության գլխովին ոչնչացման վտանգը, նա պաշտպանում էր իր գոյության իրավունքը։ Հայաստանը բազմիցս ենթարկվել է ավերածության ու թալանի, և ամեն անգամ աշխատասեր հայ ժողովուրդն իր ձեռքերով վերականգնել է տնտեսությունը, լուսավորությունը, քանդված գյուղերն ու քաղաքները, կուլտուրայի օջախները։

Այո, դժվար է եղել աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի՝ հայ ժողովրդի պատմական ուղին։

Այդ պատճառով էլ միանգամայն հասկանալի են այն բուռն իղձերն երջանկության մասին, որոնց այնքան հաճախ հանդիպում ենք ժողովրդական էպոսում և հայ լուսավորիչների ստեղծագործություններում։ Իր հայրենիքը ազատ, ուժեղ և երջանիկ տեսնելու ձգտումը կարմիր թելի նման անցնում է հայ ժողովրդի ականավոր զավակների ստեղծագործությունների միջով։

1828 թ. Արևելյան Հայաստանի միացումը Ռուսաստանին հայ ժողովրդի պատմության մեջ՝ դարձավ շրջադարձային իրադարձություն և նրա հետագա զարգացման համար ունեցավ հսկայական առաջադիմական նշանակություն։

Սակայն ցարական Ռուսաստանի պայմաններում էլ հայ ժողովուրդը ենթարկվում էր սոցիալական և ազգային ճնշման։ Ցարական ինքնակալությունը Հայաստանը դիտում էր որպես գաղութ։ Ինչպես մինչհեղափոխական Ռուսաստանի մյուս ժողովուրդները, հայերը նույնպես զրկված էին ազատությունից և

ինքնավարման իրավունքից։ Աշխատավոր ժողովրդի, հասարակ մարդկանց վիճակը առաջվա նման շարունակում էր մնալ ծանր։

Հայաստանի և Ռուսաստանի միացման գլխավոր արդյունքն եղավ այն, որ այդ ժամանակվանից հայ ժողովուրդն իր բախտը կապեց ռուս մեծ ժողովրդի հետ, իր ռուս եղբոր հետ կիսեց վիշտն ու խինդը, նրա հետ միասին պայքարի դուրս եկավ ցարական ինքնակալության դեմ։

Արդեն Ռուսաստանում հեղափոխական փոթորիկների արևածագին հայ ժողովրդի լավագույն ներկայացուցիչները քայլում էին լենինյան գվարդիայի ավանգարդում, բոլշևիկյան կուսակցության ստեղծման ժամանակաշրջանում, 1905 թվականի հեղափոխության բարիկադային կռիվների կրակի մեջ։ պատմական Հոկտեմբերի նախօրեին և ընթացքում հանդիսանում էին աշխատավորների մեծագույն առաջնորդ՝ Վլադիմիր Իլյիչ Լենինի մերձավոր հետևորդները։

Իլյիչի մոտիկ բարեկամ Իսահակ Լալայանցը, ականավոր մարքսիստ Ստեփան Շահումյանը, բոցավառ հեղափոխականներ Սուրեն Սպանդարյանը և Բոգդան Կնունյանցը, լեգենդար Կամոն (Սիմոն Տեր-Պետրոսյան) ու բոլշևիկյան կուսակցության շատ այլ աչքի ընկած գործիչներ իրենց ամբողջ կյանքը նվիրեցին ժողովրդի ազատության ու երջանկության գործին։

Եվ բազմաչարչար հայ ժողովուրդը ձեռք բերեց ազատություն ու երջանկություն։ Նա այդ բանին հասավ մարդկության պատմության մեջ խոշորագույն իրադարձության՝ Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխության շնորհիվ։ Հոկտեմբերյան հեղափոխության հաղթանակը ընդմիշտ վերջ տվեց դասակարգային ճնշմանը, քանդեց ազգային ճնշման պատնեշները, նախկին ցարական Ռուսաստանի ժողովուրդների առջև բաց արեց ճանապարհ՝ դեպի լուսավոր ապագան։

Սակայն, մինչև լիակատար ազատությունը, հայ ժողովուրդը ստիպված էր պայքարել ևս մի քանի տարի։ Երկրում իշխանությունը խլեց դաշնակների կուսակցությունը, որը ձգտում էր խեղդել բանվոր դասակարգի և աշխատավոր գյուղացիության հեղափոխական շարժումը, ժողովրդին շեղել ռուսական հեղափոխությունից։ Սակայն ոչ մի ուժ չկարողացավ կանգնեցնել աշխատավորների ձգտումը՝ գնալու մեծ Լենինի նշած ուղիով։ Ազատության ժամը հասավ՝ 1920 թ. նոյեմբերի 29-ին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ զենքի ուժով տապալեցին դաշնակների իշխանությունը և երկրում հաստատեցին սովետների իշխանություն։ Այդ վճռական օրերին հայ ժողովրդին օգնության հասան հերոսական 11-րդ կարմիր բանակի զորամասերը։

Սոցիալիստական հեղափոխությունը հաղթանակեց։ Հանրապետությունում, սովետական կարգերի հաստատման առաջին իսկ օրից, գրվեց սոցիալական արմատական վերափոխումների սկիզբը։

Ազգայնացնելով հողը, հանքերը, խոշոր արդյունաբերությունը, երկաթուղային տրանսպորտը, բանկերը, անտառային և ջրային ռեսուրսները, Հայաստանի աշխատավորները, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, անցան քայքայված տնտեսության վերականգնմանը։ ժողովրդական լուսավորության և առողջապահության կազմակերպմանը, ժողովրդի բարօրության և կուլտուրայի բարձրացման համար պայքարին։

Կատարված փոփոխությունների մասին ճիշտ պատկերացում ունենալու համար հիշենք, թե ի՞նչ էր ներկայացնում իրենից մինչհեղափոխական Հայաստանը։ Լինելով ցարական Ռուսաստանի հետամնաց ծայրամասերից մեկը, Հայաստանը ուներ շատ թույլ զարգացած էկոնոմիկա։ Ծանր արդյունաբերական ձեռնարկություններ էին միայն Ալավերդու և Ղափանի հանքերը իրենց ոչ մեծ և պրիմիտիվ պղնձաձուլական գործարաններով, որոնց արտադրանքը՝ սև պղինձը Հայաստանից դուրս էր բերվում որպես կիսաֆաբրիկատ։ Պղնձահանքային արդյունաբերությունից հետո որոշակի տեղ էր զբաղեցնում գինուկոնյակի արտադրությունը։ Արդյունաբերության մյուս ճյուղերը ներկայացնում էին պանրի, պահածոյի, կաշեգործական, բամբակազտիչ, յուղագործական, գարեջրի և օճառի, մետաղամշակման և այլ թույլ, մանր կիսաարհեստավորական և կիսամեքենայացված ձեռնարկությունները։

Աղդաբնակչության 90 տոկոսը զբաղվում էր հողագործությամբ։ Պրիմիտիվ բնույթ ունեցող գյուղատնտեսության մեջ նույնպես գերիշխում էին հետամնացությունն ու ձեռքի աշխատանքը։ Բացի հատիկավոր կուլտուրաներից մշակվում էին բամբակ, վուշ և քունջութ։ Խաղողագործությունը, պտղաբուծությունը և անասնաբուծությունը տալիս էին սահմանափակ ապրանքային արտադրանք։

Սակայն այդ քիչն էլ, որ գոյություն ուներ, համարյա ոչնչացվեց պատերազմների և դաշնակների «տնօրինության» հետևանքով։ Պղնձի արդյունաբերությունը հասցվել էր ծայրահեղ քայքայման։ 1918 թվականին պղնձի ձուլումը լրիվ կերպով դադարել էր ինչպես Ալավերդում, այնպես էլ Ղափանում։ Դադարել էին գործել նաև շատ այլ ձեռնարկություններ։ Արդյունաբերության արտադրանքը 1919 թվականին՝ 1913 թվականի համեմատությամբ կրճատվել էր ավելի քան երեք անգամ։

Նույնպիսի աղքատ վիճակում էր գտնվում նաև գյուղատնտեսությունը։ Դադարեց արժեքավոր գյուղատնտեսական կուլտուրաների մշակումը, շեշտակիորեն կրճատվեց խաղողի և պտուղների համախառն բերքը, 3.5 անգամ նվազեց անասունների գլխաքանակը։ Գյուղատնտեսության արտադրանքը կրճատվեց վեց անգամ։

Այսպես էր երկրի էկոնոմիկայի վիճակը։ Իսկ ժողովուրդը սովամահ էր լինում, երկրում կային հարյուր հազարավոր փախստականներ և որբեր։ Մոլեգնում էին համաճարակները, չկային բժիշկներ և դեղորայք, մասսայական մահացությունների հետևանքով աղետալիորեն նվազում էր աղգաբնակչությունը։

Այսպիսին էր վիճակը երկրում սովետական իշխանության առաջին օրերին։

Միանգամայն հասկանալի է, որ տնտեսության վերականգնումը և ժողովրդին աղքատությունից փրկելը կապված էր հսկայական դժվարությունների հետ։ Սակայն դրանք հաջողությամբ հաղթահարվեցին ռուս մեծ, և մեր երկրի մյուս ժողովուրդների օգնության շնորհիվ։

Երիտասարդ հանրապետությունում սկսվեց արդյունաբերական նոր ձեռնարկությունների, հանքերի, էլեկտրակայանների, ոռոգման սիստեմների վերականգնման և շինարարության, ցանքատարածությունների ընդլայնման, խաղողի և պտղատու նոր այգիների ավելացման և հների վերականգնման եռուն

աշխատանք։ Արդեն 1928 թ. արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքը գերազանցեց 1913 թ. մակարդակը։

Մինչպատերազմյան հնգամյակի տարիներին կառուցվեցին և շահագործման հանձնվեցին հարյուրավոր արդյունաբերական ձեռնարկություններ, ստեղծվեցին արդյունաբերական նոր ճյուղեր, էներգետիկայի հզոր բազա։

Երկրի ծանր ինդուստրիայի զարգացման հաջողությունները բարենպաստ պայմաններ ստեղծեցին գյուղի սոցիալիստական վերակառուցման համար։ Կոմունիստական կուսակցությունը, ղեկավարվելով Լենինի հանճարեղ կոոպերատիվ պլանով, մանր, փոշիացած գյուղական տնտեսությունները միավորեց խոշոր կոլեկտիվ տնտեսությունների մեջ, գյուղը կանգնեցրեց սոցիալիստական ուղու վրա։ Գյուղատնտեսությունը դուրս եկավ դարավոր հետամնացությունից և կանգնեց աննախընթաց վերելքի ճանապարհին։

Արդեն Հայրենական մեծ պատերազմին նախորդող տարիներին Հայաստանը անցավ Սովետական Միության տնտեսապես զարգացած հանրապետությունների շարքը՝ ժամանակակից ծանր արդյունաբերությամբ և առաջավոր գյուղատնտեսությամբ։

Հայրենական մեծ պատերազմի տարիներին, հայ ժողովուրդը, ինչպես և մեր երկրի մյուս եղբայրական ժողովուրդները, ուժ և եռանդ չխնայեց թշնամու նկատմամբ հաղթանակն ապահովելու համար։ Հայրենիքի պատվի և անկախության, Հոկտեմբերյան հեղափոխության շնորհիվ ձեռք բերած նվաճումների պաշտպանության համար ողջ սովետական ժողովրդի հերոսական պայքարում արժանի տեղ գրավեցին Հայաստանի որդիներն ու դուստրերը։

Աննախընթաց վերելք ապրեց Սովետական Հայաստանի էկոնոմիկան հետպատերազմյան տարիներին։ Չորրորդ հնգամյա պլանի կենսագործման շնորհիվ (1946—1950 թթ.) արդյունաբերական արտադրանքի ծավալը, 1940 թվականի համեմատությամբ, ավելացավ 2,5 անգամ։

ՍՄԿՊ XXI համագումարը նշանավորեց մեր հայրենիքի մուտքը կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը։ Սովետական ժողովրդի կողմից հաջողությամբ կենսագործվող երկրի էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման յոթնամյա պլանը (1959—1965 թթ.) իրենից ներկայացնում է կոմունիզմի նյութատեխնիկական բազայի ստեղծման մեծ ծրագրի էական մասը։ Այն ապահովեց Սովետական Միության բոլոր հանրապետությունների, այդ թվում և Հայկական ՍՍՌ-ի ժողովրդական տնտեսության նոր վերելքը։ Բավական է ասել, որ յոթնամյակի ընթացքում արդյունաբերական արտադրանքը հանրապետությունում ավելացել է ավելի քան երկու անգամ, այդ թվում այնպիսի առաջատար ճյուղերինը, ինչպես գունավոր մետալուրգիայինը՝ 2,8 անգամ, քիմիական արդյունաբերությանը՝ 3 անգամ, մեքենաշինությանը՝ 3,5 անգամ։ Ներկայումս Սովետական Հայաստանն ունի բարձր զարգացած արդյունաբերություն. նրա արտադրանքի ծավալն ընթացիկ տարում 1913 թ. մակարդակը գերազանցում է 110 անգամ, միայն մեկ օրվա ընթացքում այն տալիս է այնքան արտադրանք, որքան տալիս էր երկիրը սովետական կարգերի հաստատմանը նախորդող մեկ տարում։

Հանրապետության արդյունաբերական ձեռնարկությունները հագեցած են ժամանակակից բարձր արտադրողական սարքավորումներով։ Արտադրության մեջ կիրառվում են գիտության և տեխնիկայի զարգացման ժամանակակից մակարդակին համապատասխանող առաջավոր տեխնոլոգիական պրոցեսներ։ Այս-

տեղ թողարկվում են բարձր սարքավորումների շատ տեսակներ և այլ արտադրանք՝ բազմազան մեքենաներ և հաստոցներ, չափող և արտադրական պրոցեսները կարգավորող ճշգրիտ սարքեր, ավտոմատացման միջոցներ, մաթեմատիկական էլեկտրոնահաշվիչ մեքենաներ, արժեքավոր սինթետիկ քիմիական արտադրանք և այլն։

Արդյունաբերության մեջ աճել են բանվորական և ինժեներա-տեխնիկական բարձրորակ կադրեր, և այսօր Սովետական Հայաստանը ղեկավարում է Իրաքի էլեկտրատեխնիկական գործարանի շինարարությունը, շատ մասնագետներ մասնակցում են ՍՍՌՄ-ի օգնությամբ, աշխարհի երիտասարդ զարգացող երկրներում, բարձրացող էներգետիկական և հիդրոտեխնիկական կառուցվածքների նախագծման աշխատանքներին։ Հանրապետության արդյունաբերությունը, իր արտադրանքի լավագույն նմուշներով, լայնորեն հանդես է գալիս միջազգային ցուցահանդեսներում և տոնավաճառներում, Մոսկվայում ժողովրդական տնտեսության նվաճումների ցուցահանդեսում։

Սովետական Հայաստանի արդյունաբերության գլխավոր ճյուղերը հանդիսանում են՝ գունավոր մետալուրգիան և լեռնահանքային արդյունաբերությունը, էներգետիկան, քիմական արդյունաբերությունը, մեքենաշինությունը (որը գլխավորապես ներկայացնում է էլեկտրատեխնիկական արդյունաբերությունը, հաստոցաշինությունը և սարքաշինությունը), շինարարական նյութերի արդյունաբերությունը, փայտամշակման արդյունաբերությունը, թեթև արդյունաբերությունը՝ լայն պրոֆիլով, սննդի արդյունաբերությունը, որը նույնպես միավորում է արտադրության շատ տեսակներ։

Արդյունաբերության բազմաճյուղային բնույթով և բարձր տեխնիկական մակարդակով են պայմանավորվում Սովետական Միության բոլոր շրջանների Հայաստանի հետ ընդլայնվող տնտեսական կապերը և շատ արտասահմանյան երկրներ արտահանվող արտադրանքի աճը։

Մեր հանրապետությունը Սովետական Միության էկոնոմիկայում զգալի տեղ է գրավում։ ՍՍՌՄ-ի միասնական ժողովրդական տնտեսության սիստեմում նա համարվում է՝ զարգացած գունավոր մետալուրգիայի, քիմիական արդյունաբերության, մեքենաշինության, շինարարական նյութերի արդյունաբերության, թեթև և սննդի արդյունաբերության շրջան։

Հայաստանը Սովետական Միության եղբայրական հանրապետություններին մատակարարում է պղինձ, ալյումին, մոլիբդեն, ցինկի և արճճի կոնցենտրատներ, ոսկի և արծաթ, սինթետիկ կաուչուկ, քիմիական մետաքսաթել, հանքային պարարտանյութեր, ավտոդողեր, ռետինատեխնիկական իրեր, մետաղահատ հաստոցներ, ուժային տրանսֆորմատորներ, գեներատորներ, շարժական էլեկտրակայաններ, էլեկտրաշարժիչներ, կաբելային արտադրանք, ինչպես նաև տարբեր տեսակի սարքեր, բազմազան շինարարական նյութեր, լայն ասորտիմենտի ժողովրդական սպառման ապրանքներ՝ գործվածքներ, կոշիկ, տրիկոտաժային և կարի արտադրանք, պահածոներ, գինիներ, կոնյակներ, ծխախոտ և շատ այլ տեսակի արտադրանք։

Այժմ Սովետական Հայաստանը աշխարհի 73 երկրներ է ուղարկում ավելի քան 150 անուն տարբեր արդյունաբերական ապրանքներ, որոնց կեսից ավելին կազմում են մեքենաները, հաստոցները ու սարքերը։

Հայկական ՍՍՌ 1966—1970 թթ. ժողովրդական տնտեսության զարգացման հիմնական ուղղություններին համապատասխան, հանրապետության ար-

գյուղատնտեսությունը կզարգանա առավել բարձր տեմպերով։ Այլ գործոնների հետ միասին այդ բանին կնպաստի ՍՄԿՊ Կենտկոմի սեպտեմբերյան պլենումի (1965 թ.) որոշումներին և ՍՍՌՄ Գերագույն սովետի վեցերորդ սեսիայի կողմից ընդունած օրենքներին համապատասխան, վերջերս իրագործված, տնտեսական ռեֆորմը։ Արդյունաբերության կառավարումը բարելավելու, պլանավորումը կատարելագործելու և արդյունաբերական արտադրության տնտեսական խթանումն ամրապնդելու ուղղությամբ միջոցառումների հետևողական իրագործումը կհասցնի արդյունաբերության մեջ իսկական որակական փոփոխությունների իրագործմանը և կապահովի երկրի ամբողջ ժողովրդական տնտեսության ավելի ինտենսիվ զարգացումը։

Արդյունաբերության մի շարք կարևորագույն ճյուղերի արագ զարգացմանը նպաստում է հանրապետության հանքերում բազմազան օգտակար հանածոների մեծ պաշարների առկայությունը։ Այդ օգտակար հանածոները մեծ չափերով օգտագործվում են արդյունաբերության մեջ։

Հողակլիմայական պայմանների բազմազանությամբ է պայմանավորված Հայաստանի գյուղատնտեսության բազմաճյուղային բնույթը։ Այստեղ աճեցվում են խաղող, դեղձ, ծիրան և այլ մրգեր, բանջարեղեն, բամբակ, ծխախոտ, շաքարի ճակնդեղ, հատիկավոր և եթերա-յուղային կուլտուրաներ։ Մեծ զարգացում ունի անասնաբուծությունը, որը տալիս է հանրապետության գյուղատնտեսության ամբողջ համախառն արտադրանքի կեսից քիչ պակասը։

Գյուղում նոր սոցիալիստական արտադրական հարաբերությունների հաստատմամբ ստեղծվեցին բոլոր պայմանները գյուղատնտեսության վերելքի համար։ Զգալիորեն ընդլայնվեցին ցանքատարածությունները, էական փոփոխություններ տեղի ունեցան կուլտուրաների հարաբերակցության մեջ, բանջարանոցային կուլտուրաների ցանքատարածությունները աճեցին 3,4 անգամ, կերայիններինը՝ 4,4 հազ. մինչև 127 հազ. հեկտար։ Սովետական իշխանության տարիներին գյուղատնտեսության մեջ մտցվեց այնպիսի արժեքավոր կուլտուրաների արտադրությունը, ինչպես ծխախոտը, խորդենին և շաքարի ճակնդեղը։ Արագ կերպով զարգանում են խաղողագործությունը և պտղաբուծությունը։ 1913 թ. համեմատությամբ խաղողի տարածությունները աճել են չորս անգամ, իսկ պտղատու այգիներինը՝ ավելի քան ութ անգամ։ Ցանքատարածությունների և բազմամյա տնկարկների ընդլայնումը ուղեկցվում է բերքատվության բարձրացմամբ։

Հայաստանը չորային երկիր է։ Դրա համար էլ արհեստական ոռոգումը վճռական նշանակություն ունի նրա գյուղատնտեսության հետագա զարգացման գործում։ Մեզ մոտ հաջողությամբ են իրագործվում ոռոգման լայն ծավալման վերաբերյալ Վ. Ի. Լենինի ցուցումները։ Կառուցված են բազմաթիվ ոռոգման ջրանցքներ, ջրամբարներ և պոմպակայաններ։ Ներկայումս հանրապետությունն ունի 270 հազ. հեկտար ջրովի հողեր, այն դեպքում, երբ սովետական կարգերի հաղթանակի նախօրյակին՝ 1920 թ. Հայաստանում ոռոգվում էին միայն 60 հազ. հեկտար հողեր։

Մեծ աշխատանք է կատարված գյուղատնտեսական աշխատանքների մեքենայացման ուղղությամբ։ Հազարավոր տրակտորներ, կոմբայններ և գյուղատնտեսական այլ մեքենաներ թեթևացնում են կոլտնտեսականների ու սովխոզների բանվորների աշխատանքը։ Էլեկտրական էներգիան լայնորեն կիրառվում է գյուղատնտեսական աշխատատար պրոցեսներում։

Սովետական Հայաստանի գյուղատնտեսությունը վերելք է ապրում։ Ադ-խատանքի ընդհանուր-միութենական բաժանման մեջ, հաշվի առնելով բնական պայմանները, նրա մասնագիտացումը ընթանում է խաղողագործության և պտղաբուծության, անասնապահության, ինչպես նաև բանջարաբուծության և ծխախոտագործության զարգացման ուղղությամբ։

Անցած քառասունհինգ տարիների ընթացքում զարգացան նաև տրանսպորտն ու կապը։ Բացի Թբիլիսի — Երևան երկաթուղային և մի քանի քարքարոտ ճանապարհներից, որոնցով հազիվ ձգվում էին սայլերը, մինչհեղափոխական Հայաստանը չուներ տրանսպորտային կոմունիկացիաներ, իսկ երկրի զգալի մասը ընդհանրապես դժվարամատչելի էր։ Երևան — Ջուլֆա — Մինջևան — Ղափան, Երևան — Սևան, Լենինական — Արթիկ և այլ երկաթուղային նոր մայրուղիների շինարարությամբ երկաթուղային ճանապարհների ընդհանուր երկարությունը կրկնապատկվեց, իսկ բեռնաշրջանառությունը ավելացավ 42 անգամ։ Սովետական իշխանության տարիներին ստեղծված է ավտոմոբիլային ճանապարհների խիտ ցանց, որն իրար է կապում հանրապետության բոլոր քաղաքներն ու գյուղերը։ Ժողովրդական տնտեսության բեռների զգալի մասը, ինչպես նաև ուղևորները ներկայումս փոխադրվում են ավտոմոբիլային տրանսպորտով։ Արագ է զարգանում ավիացիոն տրանսպորտը։ Երևանը օդային հաղորդակցությամբ կապված է երկրի շատ խոշորագույն քաղաքների հետ։ Աճում է նաև տեղական ավիացիան։

Լիովին ապահովված է բոլոր բնակելի կետերի, կոլտնտեսությունների, սովխոզների, գյուղական սովետների հեռախոսակապը։ Մեծ զարգացում են ստացել ռադիոն և հեռուստացույցը։

Արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրության աճի բարձր տեմպերը, էկոնոմիկայի և կուլտուրայի բոլոր ճյուղերի զարգացումը պայմանավորված է կապիտալ շինարարության հսկայական մասշտաբներով։ Մեր օրերում չկա էկոնոմիկայի, կուլտուրայի և կենցաղի այնպիսի բնագավառ, որի զարգացումն ու կատարելագործումը կապված չլինի կապիտալ շինարարության հետ։ Բավական է ասել, որ հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ միայն կենտրոնացված կապիտալ ներդրումների ընդհանուր ծավալը, վերջին յոթ տարիների ընթացքում, գերազանցում է 1,5 միլիարդ ռուբլուց։ Կառուցված և շահագործման է հանձնված ավելի քան երեք հարյուր արդյունաբերական նոր ձեռնարկություններ և արտադրամասեր, դրանց թվում՝ Երևանի ջերմաէլեկտրակենտրոնը, Կիրովականի արհեստական մետաքսաթելի գործարանը, Ագարակի պղնձա-մոլիբդենային կոմբինատը, Իջևանի գորգի ֆաբրիկան, դաշնամուրի ֆաբրիկան, Կիրովականի քիմիական և Ալավերդու պղնձա-քիմիական կոմբինատներում, Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի. «Պոլիվինիլացետատ» և այլ գործարաններում նոր արտադրական կարողություններ։ Նոր տեխնիկայի հիման վրա վերակառուցվել և ընդլայնվել են շատ գործող արդյունաբերական ձեռնարկություններ։ Արդյունաբերության հիմնական ֆոնդերը, յոթնամյակի անցած վեց տարիների ընթացքում, ավելացել են 2,1 անգամ։

Մեծ շինարարություն է իրագործվում գյուղում։ Վերջին տարիների ընթացքում կառուցվել և շահագործման են հանձնվել Արզնի—Շամիրամ ջրանցքի 1-ին հերթը, Թալինի և Կոտայքի ոռոգման սիստեմները, Մանթաշի ջրամբարը, մի շարք պոմպակայաններ ու այլ օբյեկտներ, որը հնարավորություն տվեց

ջրովի հողատարածությունները ընդլայնել 50 հազ. հեկտարով։ Կոլտնտեսություններում ու սովխոզներում կառուցվել են շատ նոր անասնապահական շենքեր, ծխախոտի չորանոցներ և արտադրական այլ օբյեկտներ։

Լայն չափերի է հասել բնակելի տների, դպրոցների, հիվանդանոցների, մանկական հիմնարկությունների շինարարությունը։ Յոթնամյակի տարիներին շահագործման է հանձնվել 2,4 միլիոն քառ. մետր տարածությամբ բնակելի տներ, 110 հազ. աշակերտական տեղով հանրակրթական դպրոցներ, ավելի քան 4 հազար մահճակալով հիվանդանոցներ։ Նոր խոշոր կառույցների թվին են պատկանում Երևանի պետական համալսարանի և մանկավարժական ինստիտուտի շենքերը, ռադիոյի տունը և այլ շենքեր։

Կառուցման պրոցեսի մեջ են ժողովրդատնտեսական մեծ նշանակություն ունեցող շատ օբյեկտներ, ինչպես Հրազդանի լեռնա-քիմիական կոմբինատը, Զոդի ոսկեհանքային ձեռնարկությունը, Տաթևի հիդրոէլեկտրակայանը, Հրազդանի ջերմաէլեկտրակենտրոնը, Ապարանի ջրամբարը և այլն։

Սովետական Հայաստանի շինարարների, ճարտարապետների և ինժեներների բազմահազար բանակն իր որոնող մտքով, բարձր պատրաստականությամբ, աշխատասիրությամբ և ստեղծարար ձեռքերով ստեղծել ու ստեղծում է մեծ նշանակություն ունեցող շատ հազվագյուտ կառույցներ, որոնք կարող են ծառայել որպես շինարարական արվեստի նմուշներ, բոլոր ժողովուրդների հպարտության առարկա։ Ահա մի քանի օրինակ. Սևան—Հրազդան էներգետիկական-ոռոգման սիստեմը, հիդրոէլեկտրակայանների Որոտանի կասկադը, կամ, որ ավելի ցուցադրական է, Արփա գետի ջրերը Սևանա լիճ ուղղելու համար 48 կիլոմետր երկարությամբ միջանցիկ թունելը։ Չէ՞ որ թունելաշինարարության համաշխարհային պրակտիկայում համարյա հազվադեպ է այսպիսի երկարությամբ համանման կառույց, որն իրագործվում է նման երկրաբանական, ռելիեֆային և կլիմայական պայմաններում։

Հայաստանում սովետական կարգերի հաստատումից հետո մեծ արագությամբ սկսեցին աճել առաջավոր տեխնիկայով հագեցած արդյունաբերական ձեռնարկությունները, դրանց թվում այնպիսի հսկաներ, ինչպես՝ Լենինականի տեքստիլ կոմբինատը, Կիրովի անվան սինթետիկ կաուչուկի գործարանը, Արարատի ցեմենտի-շիֆերի կոմբինատը, Քաջարանի պղնձա-մոլիբդենային կոմբինատը, Լենինականի էլեկտրամեքենաշինական գործարանը, ալյումինի, արհեստական մետաքսաթելի գործարանները և ուրիշներ։

Մենք իրավամբ հպարտանում ենք ճարտարապետական և շինարարական արվեստի մեր հնագույն հուշարձաններով։ Իսկ կարելի՞ է արդյոք մոնումենտալությամբ և ճարտարապետությամբ դրանց հետ համեմատել սովետական ժամանակաշրջանի Երևանի շատ շենքեր և կառույցներ, որոնցից յուրաքանչյուրը կարող է մրցել աշխարհի ժամանակակից դանկացած մայրաքաղաքի զարդարանքի հետ։ Ահա, օրինակ, օպերայի և բալետի պետական ակադեմիական թատրոնի — հայֆիլհարմոնիայի համերգային մեծ դահլիճի շենքը, Վլադիմիր Իլյիչի անվան հրապարակի շենքերի և կառույցների անսամբլը, Հրազդանի մեծ կամուրջը, Մատենադարանի՝ հնագույն ձեռագրերի պահեստարանի շենքը և այլն։ Այս բոլոր հազվագյուտ կառույցները ստեղծված են սովետական մարդկանց, մեր աճեցրած կադրերի ձեռքերով։

Սովետական իշխանության տարիներին լիովին փոխվել է Հայաստանի արտաքին տեսքը։ Էկոնոմիկայի աճի հետ միասին արագորեն զարգանում են

քաղաքները, առաջ են գալիս նոր արդյունաբերական կենտրոններ, ավելանում է քաղաքային ազգաբնակչության թիվը։ Նախկին 4 քաղաքների փոխարեն, որոնք ունեին 90 հազար բնակիչ, այժմ Հայաստանում գոյություն ունի 23 քաղաք և 27 քաղաքատիպ ավան, որտեղ ապրում է 1.180 հազ. մարդ։ Քաղաքային ազգաբնակչությունը 1913 թ. 9 տոկոսից ներկայումս հասել է 55 տոկոսի։

Ի՞նչ էին ներկայացնում իրենցից Հայաստանի հին քաղաքները։ Դրանք այն ժամանակի համար տիպիկ նեղ, առանց սալահատակի, ծուռումուռ և կեղտոտ փողոցներով, առանց կոյուղու, իսկ ոմանք նաև առանց ջրմուղի։ Կոմունալ և կուլտուր-կենցաղային տարրական պայմաններից զուրկ ցածր, կավաշեն շինություններով բնակավայրեր էին։

Սովետական իշխանության տարիներին ոչ միայն անճանաչելիորեն փոխվեց մինչև այդ եղած քաղաքների՝ Երևանի, Ալեքսանդրապոլի (Լենինական), Ղարաքիլիսայի (Կիրովական) և Դիլիջանի տեսքը, այլև, ինչպես նշված է վերևում, ստեղծված են շատ նոր քաղաքներ և քաղաքատիպ ավաններ։ Դրանց թվում են պղնձի արդյունաբերության կենտրոններ՝ Ալավերդին ու Ղափանը, լեռնահանքային արդյունաբերության կենտրոններ՝ Քաջարանն ու Ագարակը, շինարարական նյութերի արդյունաբերության կենտրոններ՝ Արարատն ու Արթիկը, սննդի արդյունաբերության կենտրոններ՝ Հոկտեմբերյանը, Էջմիածինն ու Արտաշատը, մեքենաշինության քաղաք Լուսավանը, առողջարան-քաղաքներ՝ Դիլիջանը, Ստեփանավանը, Գորիսը, Սևանը և այլն։

Երևանը՝ ցարական Ռուսաստանի նախկին գավառական կենտրոնը, 30 հազ. ազգաբնակչություն ունեցող հետամնաց քաղաքից դարձավ Սովետական Միության խոշոր ինդուստրիալ-կուլտուրական կենտրոններից մեկը, ուր բնակվում է մոտ 640 հազ. մարդ։

Սովետական Հայաստանի քաղաքների բնորոշ գծերն են ասֆալտապատ և կանաչապատ ճանապարհները, լայն հրապարակները, հիանալի քարերից՝ վարդագույն, ամենաբազմազան տուֆերից, բազալտներից ու դրանիտներից կառուցված բազմահարկ, գեղեցիկ բնակելի տները, հասարակական կազմակերպությունների, թատրոնների, ուսումնական հաստատությունների, գիտահետազոտական ինստիտուտների, հիվանդանոցների, մանկական հիմնարկների, բարեկարգ փակ շուկաների, գործարանների և ֆաբրիկաների ընդարձակ կորպուսների ճարտարապետորեն հարուստ ձևավորված շենքերը, ընդարձակ սաղարթախիտ այգիները, կանաչապատված գոտիները։

Մեր քաղաքները հիմնականում ապահովված են կոմունալ բոլոր պայմաններով՝ ջրմուղով, կոյուղու սիստեմներով, էլեկտրականությամբ, գազով և ջերմամատակարարմամբ, քաղաքային տրանսպորտի և կապի ժամանակակից տեսակներով։ Արմատապես վերածնվեցին նաև գյուղական բնակավայրերը։ Մինչհեղափոխական Հայաստանի գյուղական ազգաբնակչության զգալի մասը ապրում էր գետնափոր տներում, շատ հաճախ անմիջականորեն ընտանի կենդանիների հետ։ Այժմ հետքեր անգամ չկան անցյալի կյանքի պայմաններից։ Գյուղացիները իրենց եկամուտներով և պետական վարկի օգնությամբ կառուցել են բնակարաններ, ամենուրեք օգտվում են էլեկտրականությունից, շատ գյուղերում նաև գազից։ Հայաստանում շատ վաղուց արդեն չկա այնպիսի գյուղ, որը չօգտվի էլեկտրաէներգիայից։ Ինչպես քաղաքում, այստեղ ևս ռադիոն, հեռուստացույցը, տնային գործածության էլեկտրական այլ սարքեր մտել

են կենցաղի մեջ։ Սովետական իշխանության տարիներին կառուցվել են շատ ջրամբարներ, դպրոցներ, հիվանդանոցներ, ակումբներ և կինոթատրոններ։ Գյուղական ակումբների շատ շենքեր, իրենց հարմարություններով և դեղեցկությամբ կարող են լինել ցանկացած ժամանակակից քաղաքի զարդարանքը։

Առանձնապես մեծ թափ է ստացել բնակարանային և կոմունալ շինարարությունը։ Կոմունիստական կուսակցությունը և սովետական կառավարությունը մեծ հոգատարություն են ցուցաբերում աշխատավորներին բնակարանով ապահովելու գործում։ 1923 թ. մինչև մեր օրերը Հայաստանի քաղաքների բնակելի ֆոնդը 595 հազ. քառ. մետրից աճել է մինչև 7.800 հազ. քառ. մետրի։

Կարճ ժամանակում արդյունաբերական կարողությունների ստեղծումը, գյուղատնտեսության վերելքը, Սովետական Հայաստանի ամբողջ էկոնոմիկայի մեծ հաջողությունները բազա հանդիսացան աշխատավորների նյութական բարեկեցության և կուլտուրական մակարդակի արմատական բարելավման համար։

Մինչհեղափոխական Հայաստանում արդյունաբերության մեջ զբաղված բանվորների թիվը չէր գերազանցում վեց հազար մարդուց։ Բանվորների աշխատանքի պայմանները շատ ծանր էին։ Աշխատանքային օրվա տևողությունը չէր սահմանափակված օրենսդրությամբ։ Խոսք անգամ չէր կարող լինել աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի, բանվորներին և նրանց ընտանիքներին բնակարանով ապահովելու մասին։ Դրան ավելացրած այն, որ երկրում մոլեգնում էր գործազրկությունը։ Գյուղում, որի հետ կապված էր ազգաբնակչության մեծ մասը, հողը մշակվում էր պրիմիտիվ եղանակով, որի հետևանքով բերքատվությունը չափազանց ցածր էր։ Դասակարգային անհավասարության հետևանքով հարկային սիստեմի ծանրությունն ընկած էր աշխատավոր գյուղացիության ուսերին, որը հազիվ քարշ էր տալիս իր կիսաքաղց գոյությունը։ Տնտեսական հետամնացությունը ծնում էր հետամնացություն նաև կուլտուրայի բնագավառում։

Պատկերը միանգամայն այլ է Սովետական Հայաստանում։ Էկոնոմիկայի և կուլտուրայի բարձր վերելքի շնորհիվ աճեց հանրապետության ժողովրդական տնտեսության մեջ զբաղված բանվորների և ծառայողների թիվը։ Արդեն առաջին հնգամյակի վերջում լիովին վերացված էր գործազրկությունը, իսկ ներկայումս բանվորների և ծառայողների թիվը հասնում է 580 հազար մարդու։

Սովետական Միությունում անդուլ կերպով աճում է ազգային եկամուտը և դրա հիման վրա տեղի է ունենում աշխատավորների կյանքի մակարդակի սիստեմատիկ աճ, բանվորների ու ծառայողների ռեալ աշխատավարձի, կոլտնտեսականների եկամուտների բարձրացում։ Հայկական ՍՍՌ-ի ազգային եկամուտը, միայն 1959—1964 թվականներին, ավելացել է 1,6 անգամ։

Բացի հասարակական արտադրության մեջ իրենց մասնակցությանը համապատասխան աշխատավորների միջև բաշխվող եկամուտներից՝ բանվորների և ծառայողների աշխատավարձից և կոլտնտեսականների աշխօրերին համապատասխան եկամուտներից աշխատավորները ստանում են նաև լրացուցիչ դգալի միջոցներ հասարակական ֆոնդերից՝ անվճար ուսուցում, հաշմանդամության, ծերության, ժամանակավոր անաշխատունակության կենսաթոշակներ և նպաստներ, առողջարանների և հանգստյան տների անվճար ու զեղչով ուղեգրեր, ինչպես նաև պետությունից և ձեռնարկությունից ստացվող այլ արտոնություններ և վճարումներ։

Բանվորների և ծառայողների ռեալ աշխատավարձի ու կոլտնտեսականների եկամուտների աճը հասցնում է ազգաբնակչության գնողունակության և ժողովրդական սպառման մակարդակի բարձրացմանը։ Պետական և կոոպերատիվ մանրածախ ապրանքաշրջանառությունը, միայն վերջին վեց տարում, ավելացել է 56 տոկոսով։

Սոցիալիստական հեղափոխության հաղթանակի առաջին իսկ օրերից կուսակցությունն ու կառավարությունը հատուկ ուշադրություն դարձրին և դարձնում են ազգաբնակչության բժշկական սպասարկմանը։ Անվճար բժշկական սպասարկումը հանդիսացավ երիտասարդ սովետական պետության օրենսդրական ակտերից մեկը։ Ամեն տարի հիվանդանոցային շինարարության, բժշկական կադրերի պատրաստման և բուժսպասարկման համար ծախսվում են հսկայական գումարներ։ Այսօր Հայաստանում յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում է 26 բժիշկ, 80 հիվանդանոցային մահճակալ, այն դեպքում, երբ 1913 թ. բնակչության նույն քանակին ընկնում էր 0,7 բժիշկ, իսկ հիվանդանոցային մահճակալ՝ 2,1։ Բոլոր պայմանները ստեղծված են մոր և մանկան առողջության պահպանման համար։

Հայաստանը հարուստ է բժշկա-առողջարանային բազմազան ռեսուրսներով։ Դրան, ամենից առաջ, նպաստում են հանքային ջրերի բազմաթիվ աղբյուրները, առանձին շրջանների բարձր լեռնային կլիմայական յուրահատկությունները և բուժիչ ցեխերը։ Հատկանշական է, որ հանրապետությունը կուրորտային գործում մինչհեղափոխության ժամանակաշրջանից ոչինչ չի ժառանգել։

Հայաստանում բուժական ռեսուրսների իսկական գիտական ուսումնասիրությունը, առողջարանների շինարարությունը իրագործվեց միայն սովետական կարգերի հաստատումից հետո։ Համընդհանուր ճանաչում ստացավ երիտասարդ առողջարան Ջերմուկը, որի տաք ջրերը իրենց բուժիչ հատկություններով հավասարազոր են հայտնի Կարլովի Վարի հանքային աղբյուրներին, բժշկման էֆեկտիվությամբ հանրահայտ Կիսլովոդսկուն չի զիջում կարդիոլոգիական առողջարան Արզնին, լայն ճանաչում է գտել Հանքավանը, որի բազմաթիվ տաք աղբյուրները ունեն «էսենտուկի» հանքային ջրերի յուրահատկությունները և հանրապետության մյուս առողջարանները։ Քառասունհինգ տարվա ընթացքում ստեղծված առողջապահության հզոր սիստեմը, բժիշկ գիտնականները, բժիշկների ու բուժաշխատողների բազմահազար կոլեկտիվը հսկում են սովետական մարդկանց առողջությունը։

Բարեկեցության մակարդակի բարձրացման ամենավառ ապացույցներից մեկը ազգաբնակչության արագ աճն է։ 1913 թ. Հայաստանի ներկայիս սահմաններում ապրում էր մոտ մեկ միլիոն մարդ։ Իմպերիալիստական և ներազգային պատերազմները, դաշնակների տիրապետության ժամանակ սովի և համաճարակային հիվանդությունների հետևանքով մեծ թվով մահացությունները զգալիորեն կրճատեցին ազգաբնակչության թիվը, չնայած այն բանին, որ հարյուր հազարավոր փախստական հայերը լցվում էին երկիրը Արևմտյան Հայաստանից՝ փրկվելով թուրքական դահիճների բարբարոսությունից, 1920 թ. սովետական կարգերի հաստատման ժամանակ Հայաստանի ազգաբնակչությունը կազմում էր 780 հազ. մարդ։ Ներկայումս հանրապետության ազգաբնակչության թիվը հասնում է 2.180 հազ. մարդու։

Սովետական Հայաստանը հսկայական ձգողական ուժ է դարձել բախտի քմահաճույքով օտարության մեջ որբացած հայերի համար։ Սովետական իշ-

խանության օրերին ավելի քան երկուհարյուր հազար հայեր վերաբնակվել են հայրենի հողում։ Մայր հայրենիքը գրկաբաց է ընդունում իր որդիներին և դուստրերին, նրանք բոլորը ապահովվում են հարմարավետ բնակարաններով, աշխատում են ըստ իրենց մասնագիտության, երիտասարդությունը հնարավորություն է ստանում սովորելու մայրենի լեզվով, նրա առաջ լայն բացված են գիտության դռները։ Վերադառնալով հայրենի երկիր, նրանք ձեռք են բերում երջանիկ կյանք, ազատ, ստեղծագործական աշխատանք։

Կոմունիստական կուսակցության և սովետական կառավարության կողմից իրագործված կուլտուրական հեղափոխությունը ինչպես ողջ երկրում, այնպես էլ Հայաստանում հասցրեց ազգաբնակչության բարձրաստիճան գրագիտության և կուլտուրական աճի, գիտության անանխընթաց զարգացման։ Եթե մինչհեղափոխական Հայաստանի ազգաբնակչության 90 տոկոսը անգրագետ էր, դպրոցներում սովորում էր ազգաբնակչության 3,5 տոկոսը, այլա արդեն 1940 թ. այն դարձավ համատարած գրագիտության երկիր։ Այսօր նրա յուրաքանչյուր չորս քաղաքացուց մեկը սովորում է որևէ ուսումնական հաստատությունում։

Մինչև սովետական իշխանության հաստատումը բուն Հայաստանում չկար ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։ Ներկայումս հանրապետության տասնմեկ բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում են մոտ քառասուն հազար ուսանողներ։ Երևանի պետական համալսարանը, պոլիտեխնիկական, գյուղատնտեսական, բժշկական, մանկավարժական և այլ ինստիտուտները պատրաստում են որակյալ ինժեներական կադրեր արդյունաբերության բոլոր ճյուղերի, տրանսպորտի, շինարարության համար, մասնագետներ գյուղատնտեսության համար, կադրեր գիտահետազոտական և կուլտուր-լուսավորական կազմակերպություններում աշխատելու համար և մանկավարժներ։ Հայաստանում լայն զարգացում է ստացել նաև միջնակարգ կրթությամբ մասնագետների պատրաստումը էկոնոմիկայի և կուլտուրայի բոլոր բնագավառների համար։

Ազգաբնակչության կուլտուրական սպասարկման համար հանրապետությունում ստեղծված է թատրոնների և կինոթատրոնների, կուլտուրայի պալատների և ակումբների, թանգարանների և գրադարանների լայն ցանց։ Ավելի քան 8300 հազար օրինակ գրքային ֆոնդով մասսայական գրադարանների թիվը հասնում է 1100-ի, այն դեպքում, երբ մինչհեղափոխական Հայաստանում կար 9 հազ. գրքի ֆոնդով 13 գրադարան։

Գրադարանների հետ միասին ժողովրդի կուլտուրական զարգացման գործում մեծ ծառայություն ունեն թանգարանները, որոնք գոյություն չունեին մինչհեղափոխական Հայաստանում, իսկ այժմ գերազանցում են երկու տասնյակից։ Դրանց թվում է պետական պատմական թանգարանը, ռևոլյուցիայի պետական թանգարանը, գրականության և արվեստի թանգարանը և այլն։

Հանրապետությունում հրատարակվում են բազմաթիվ թերթեր, ժուռնալներ և բյուլետեններ, մեկ տարում տպագրվում է մինչև հազար անուն գիրք՝ ութ միլիոն օրինակ ընդհանուր տպաքանակով։ Հայ գրողների ստեղծագործությունների կողքին հրատարակվում են ռուս և սովետական գրականության, եղբայրական հանրապետությունների և համաշխարհային կլասիկների ստեղծագործությունների թարգմանությունները։

Սովետական Հայաստանում հսկայական քայլերով է զարգանում գիտությունը, որի ուսումնասիրությունները ընդգրկում են ժողովրդական տնտեսության, բնության ու մարդկային գործունեության բոլոր բնագավառները։ 1943 թ. ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի հայկական ֆիլիալի բազայի վրա ստեղծվեց Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիան, որը միավորեց տասնյակ ինստիտուտներ և գիտական կազմակերպություններ։ Դրա հետ միասին հանրապետությունում գործում են արդյունաբերության, գյուղատնտեսության, էկոնոմիկայի և այլ բնագավառներում հետազոտություններ կատարող տարբեր գերատեսչությունների բազմաթիվ գիտահետազոտական կազմակերպություններ։ Հայաստանի ավելի քան հարյուր գիտահետազոտական կազմակերպություններում աշխատում են յոթ հազարից ավելի գիտական աշխատողներ։

Դժվար է թվարկել բոլոր այն ստեղծագործություններն ու մշակումները, որոնք կատարվել են հանրապետության գիտնականների կողմից, նկարագրել էկոնոմիկայի և կուլտուրայի զարգացման գործում նրանց ներդրումները։ Միանգամայն պարզ է՝ գիտությունը Սովետական Միության բոլոր եղբայրական հանրապետություններում զարգանում է այնպիսի հաջողությամբ և մեր հասարակական կյանքում ունի այնպիսի մեծ նշանակություն, որ նա դառնում է անմիջական արտադրողական ուժ։

Կուլտուրական ժառանգության հարուստ բազայի վրա սոցիալիստական հեղափոխության հաղթանակից հետո աննախընթաց ծաղկման հասան հայ ժողովրդի գրականությունն ու արվեստը։ Կուսակցությունը և կառավարությունը ստեղծել են բոլոր պայմանները ժողովրդական տաղանդների ստեղծագործական աճման համար։ Հանրապետության էկոնոմիկայի շեշտակի վերելքը, աշխատավորների բարեկեցության անընդհատ լավացումը, լուսավորության, գիտության ու տեխնիկայի զարգացումը, ժողովրդի ընդհանուր կուլտուրական մակարդակի աճը հող հանդիսացան գրականության և արվեստի նոր աչքի ընկնող ստեղծագործությունների երևան գալուն, որոնք ընդհանուր ճանաչում են գրտել ինչպես Հայաստանում, այնպես էլ նրա սահմաններից դուրս և մեծապես նպաստում են աշխատավորների գաղափարական և էսթետիկական դաստիարակությանը։

Դեռ 1956 թ. Ավետիք Իսահակյանը գրել է, որ նախկինում երբեք հայ իրականությունը գրականության, արվեստի, հրապարակախոսության համար չի տվել այնպիսի հարուստ, բազմազան նյութ, ինչպես այսօր։

Այսպիսիք են փաստերը։ Սրանք ցուցանիշներից սոսկ մի քանիսն են, որ տվել է սոցիալիզմը հայ ժողովրդին։ Էկոնոմիկայի և կուլտուրայի բնագավառում այդ հաջողությունները նվաճվել են Հայաստանի բանվորների, գյուղացիների և ինտելիգենցիայի աշխատանքով, կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ, Սովետական Միության ժողովուրդների եղբայրական փոխօգնության պայմաններում։